

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՍԵՏԱՐԻՒ

891.71.5
4-25

ԴԿԱՆՈՒՅ



ՊԵՏՀՐԱՍ

1 9 3 2

ՅԵՐԵՎԱՆ

30 MAY 2011

ՍԱՆԿԱԿԱՆ-ՊԱՏՎԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

891.71.05
4-25

Լ. ԿԱՍՈՒՆ

Պ Լ Ա Ն Ե Տ Ա Ր Ի Ա

ԲԱՐՁՐ. 4.

70343
9634985
9634986

1932

Պետիրասի տպարան
Գլավլիս № 6725(բ)
Հրատ. № 1806
Պատվ. № 4947
Տիրամ. 2000



54124-66

Մըրագրեց՝ Հ. Մառիկլան

Հանձնված և արտադրության 18/IX 1931 թ.
Մառորագրված և ապագրելու 10/XII 1932 թ.

Են ընտանիքներում
յերեխաները մեծանում
են անկյուններում։

Սենյակն ունի ընդա-
մենը չորս անկյուն։ Յե-
րեք անկյուննում յերեխա-
ներին պատժում են։ Այդ
անկյուններում նրանց

կանգնեցնում են պատի մոտ։ Զորբորդ անկյուննում յերեխաներն
իրենց մեղեքն են քավում։ Զորբորդ անկյուննում ապրում են սարդերն
ու աստված։ Ամերող անկյունը զարդարված ե սրբերի պատկերներով։
Պատկերների տոջենում կախված են կամնթեղ, իսկ յետենում՝ վոստանի
թելերից կախված են սարդեր և ճանձերի կմախքներ։

Յերբ յերեխաները վերջացնում են աղոթելը, վորպես քաղց-
րավենի, նրանց համար կարդում են մի հին, շշատ հին գրքուլի՛
Գրքույկում պատմվում ե, ինչպես յերեխաներն առաջ չարություն-
ելին անում, իսկ հետո ուղղվում են և դառնում շատ լավ յերեխաներ։
Նրանք կատլետը դանակով չեն ուտում, վախենում են աստծուց,
և գրքի ամեն մի յերեսը կարգավիս բացականչում են, «այս և աչ-
քերը դեպի յերկինք են բարձրացնում»

Համարլա բոլոր հին գրքերում մարդիկ միշտ ել իրենց տչքերը
բարձրացնում ելին դեպի յերկինք։ Այդ նշանակում եր, զոր
նրանք խոսում են աստծու հետ։



Քանի մարդիկ հա-
վատում ելին ամեն մի
առասպելի, յերկինքը
համարում ելին աստված-
ների, հոգիների, հրեշ-
տակների և զանազան
որբերի համբակացարան:

Հույներն ալսպես ել անվանում ելին իրենց աստվածներին՝
«Երկրաբնակներ», ալսինքն յերկնքի բնակիչներ:

Քրիստոնեաները նույնպես յերկինք ուղարկեցին իրենց Քրիս-
տոսին:

Աղոթքների փոստի հասցեն ալսպես կլիներ.

Յ Ե Բ Կ Ի Ն Ք

ՄԵԾ ԱՐՁԻ ՀԱՄԱՏԵՂՄՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ
ՏԵՐ ԱԱՏԾՈՒՆ
ՀԱԽԱՆԵԼ ՃԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՒՄ

Տերտերները հավատացնում ելին, վոր աղոթքը կարող են
տեղ հասցնել ամեն մի հասցելով. Նրանք յերկնալին նամակատար-
ներ ելին:

Հին իմաստաներ — խալդեացիները յերկնքում մի ամբողջ կեն-
դանաբանական տլցի ելին զցեր Նրանք ասում ելին, վոր յերկնքում
ապրում են սուրբ կենդանիներ և հրեշներ. Աւտեղ կալին կանաչ կա-
րգիներ, և առուճներ, և ձկներ և ուրիշ զանազան հատուկ յերկ-
նալին արարածներ:



Աւտեղ ահա նկարված ե խալդեացիների աստղալից կենդա-
նաբանական ալդին:

Ուրիշները կարծում ելին, վոր յերկնքի վրա աստղերով գըր-
ված ե ամբողջ աշխարհի և առանձին մարդկանց բաղզը. Աստղերով
գուշակում ելին, թե ինչ կարող ե պատահել մարդուս հետ ՑԵԹԵ
մարդս ծնվում եր բաղդավոր, աստղի տակ, նա կարող եր հան-
գիստ լինել իր գործերի համար. Արագես ելին համոզում աստղա-
բանները, վորոնք աստղերով գուշակում ելին անպես, ինչպես
պառավ կախարդուհիները սուրճի մըուրով...

Աստղաբաշխներն արգեն մի քանի գործիք ունելին՝ յերկինքը
գիտելու համար. Նրանք վորոշ յերկնալին շարժման կանոնների մա-
սին վորոշ բան գլխի ելին ընկնում. Բայց այդ ամենը դեռ շատ
հեռու յերկինքի մասին խական գիտություն լինելուց տի-
յեզերագիտությունից:

Գուշակությունը գիտություն չե.

Յեթև հագատանք տերտերներին, ասոված է ստեղծել որեւ
լերկիւր, լուսինը, մի խոսքով՝ ամբողջ աշխարհը, և այն ել ան-
պիսի արագությամբ, ինչպես ձվածեղն են լեփում։

Գիտությունը պարզել է, վար փաստորեն լերկիւր, և արել և
մյուս լուսատու մարմինները առաջ են լեկել շատ լերկար ժամա-
նակ. միլոնավոր տարիների ընթացքում։

Գիտնականները վերջի վերջո հասկացան, վորագաստղերը շատ
հեռավոր արևներ են, և մի քանի անգամ մեծ են՝ մեր արևից։

Յերկնքի կազմության գաղտնիքն իմանալու համար մարդիկ
համարեցին խոջրացնող հայելիներ ունեցող խողովակներ։ Նրանք
չելին գուշակում, այլ ուսումնասիրում ելին։ Գուշակող աստղաբաշխ-
ներին փոխարինեցին գիտնական աստղագետները։ Յեվ նրանք ի-
մացան, վոր տիեզերքը շատ սեծ եւ։ Միտին թե աստծու համար
վոչ մի տեղ ել չկար այնտեղ։

Ալժաս անկյուններում
մեծացող լերեխաններն անգամ
տչքերը, կուչ ածելով, հարց.
նում են.

— Ինչպես կարող եւ ասո-
ված լերկնքում նստել, լերբ
ախտեղ միան ոդ եւ իսկ
նրանից դեն իսկի ոդ ել չկա։
Մի աստղից մինչև մյուս աս-
տղը սատոցային գատարկու-
թյուն եւ։ Վոչ մի ջերմություն
չկա։

Արագիսով ասոված մասց
առանց ընակարանի։

Յերկնքի հասցեների սե-
ղանում ստիպված լեզան զրե-
լու։

«Հեռացել եւ առանց նոր
հասցեն հալունելու»։

— Ճիշտն այն է, վոր նա լերեք ել գոյություն չի ունցել, —
ասացին համարձակ մարդիկ։

Հենց այդ ժամանակ ել
մեծ գիտնական կոպերնիկոսն
ոկտեգ ապացուցել, վոր լեր-
կիրը պատվում եւ Դե արի
ու սրանից հետո իմացիր, թե
վոր կողմը պետք եւ բարձրա-
ցնես աչքերդ դեպի լերկնք։
Վորանել եւ վերել, և վորտեղ՝
ներքել։


— Այս ամենն, իհարկե, սաս-
տիկ բարկացը քրմերին և
քահանաներին։ Զե վոր նրանք
համոզում ելին սովորականներին
ու չքավորներին հարուստ-
ների պատճառով լերկիս վրա
տանել բոլոր զրկանքները,
վորպեսզի դրա վորխարեն
մահից հետո դնան «լերկնալին
թագավորություն»։ Իսկ աստղագետներն իրենց խողովակներով
լերկնքում վոչ մի տեղ չելին զտնում այդ թագավորությունը։

— Ներեցեք, սուրբ հալրեր, — ասում ելին գիտնականները,
— հապա ուր եւ, աստված չի լերեւում։ Մենք ամբողջ լերկնքը խուզար-
կեցինք բայց, ներեցեք, աստծուն չտեսանք... Կարծես թե նա չկա...
— Ի՞նչպես եք դուք համարձակում ձեր անմաքուր խողո-
վակները ուղղել դեպի լերկնք, — աղաղակ բարձրացը լին սուրբ
հալրեր։


Գիտնականներին բռնում ելին և ձգում բերդը Բարի Հռոմի
պապը հրամարում եր տանջել նրանց, վորպեսզի նրանք ասելին,
թե լերկիրը տափակ եւ, իսկ նրա վերեւ լերկնքում նստած եւ
աստված։ Աստղագիտական գրքերն ալրվում ելին։ Շատ հաճախ ել
արդ գրքերի հետ միտաեղ խարույկի վրա ալրվում ելին նաև նրանց
նեղինակները։


Մեծ գիտնական Գալիլեյը, վոր տաղացուցեց լերկիս պատվելը,
մեծ տանջանքներ կրեց։ Նրան նւատցը բանա, բայց նա վոչ մի
կերպ անձնատուր չեր լինում։

— Բայց և այնպես նա պատվում եւ, — ասում եր Գալիլեյը։



Գալիլեյ





Յեթե Մասկալում
մտրդ գիշեր ժամանակ
Կուղինսկու հրապարա-
կից իջնե ներքե, կարող
ե սաստիկ վախենար
Կուղինսկու հրա-
պարակում հնչում ե առ-

լուծի ահռելի մռնչո-
յը... Ալսինքն մռնչունին
դժվարութիւամբ պատաս-
խանում ե արթնացած
վազրի վոռնոցը:

— Կպատառուտեմ...
մըթմթում ե հովազը:


— Պահապան... —
Կարող ե կանչել վախե-
ցած անցորդը:

— Ընկեր միլիցոներ,
ազատեցեք ինձ վալրի
գաղանսերից: Նըանք
հենց հիմա ինձ կլափեն...

— Հանգստացեք, քաղաքացի, — կպատասխանե միլիցոները, —
աջ կրղմով անցեք, վոչ մի բան չի պատահիր: Ալդ Կենդանաբանա-
կան ալգում առյուծն անախորժ լերազ ե անսեր:

Կենդանաբանական ալգում (իսկական և վոչ թե խալդելացի-
ների) ապրում են մըբողջ լերկրակնդիս գաղանսերը:

Ցուրաքանչլուր գաղանի հատկացված ե այնպիսի անկուն,
ինչպիսի աեղում նա սռվոր ե լեղել ապրել ազատութիւն մեջ:



Հենց ալդ Կենդանաբանական ալգու կողքին Մոսկալի Խոր-
հուրդը նորերս կտուցել ե մի մեծ տուն, վորի մեջ ապրում են
ասաղերը, արել, լուսինը և մոլորակները...

Հասկանալի լե, վոր դրանք իսկական ատրդեր չեն:

Ալդ ատնն ապրում են մատղերի պատկերացումները, վորոնք
բազմաթիվ միլիոն անդամ փոքրացված են:


Դա—աստղալին կրկես ե:

Ան տունը, վորտեղ ապրում են աստղերը, կոչվում ե «Պլո-
նետարիտ»:

Վրայից նա կտաքրիչի ձևով ծածկված ե բարձր վողորկ գլո-
բեթով:

Նա նման ե կրկեսի գմբեթին, բայց ավելէ մեծ ե և սրածալը:


Նա վալրում ե, վորպես մի հսկայական արծաթե ձու, վոր
պատվանդանի վրայից սուր ծալրով ցցված ե դեպի վեր:




Ալդ հսկայական կիսածվի մեջ ե հենց տեղավորված ամբողջ
աշխարհը, խաղալիք աշխարհը: Պահնետարիտի մոտով անցնող մար-
դիկ անպարմտն կանդ են առնում:

Փալվող գմբեթը շատ հրապուրիչ ե:

Ինչպիսի հրագիներ ասես, վոր չեն կտարվում, նրա մեջ:



Մենք առմս ենք վերցնում և անցնում
հանդերձարանով։ Այսաեղ գեղեցիկ կի-
սաշրջանաձև շարված են կախարանները։
Մենք հանում ենք վերտարկուներա Անհամ-
բերությունից մեր մասները մեզ չեն հնա-
շանդիլում, իոկ կոճախներն ել չեն ուզում արձակվել Հետո մենք
վազում ենք սանդուխքով։ Ախ, մի շուտ ե... շուտ... Սկիզբ ժամի
վերկուսին եւ։




Ծառալողը բաց ե անում սև կտորով ծածկված գուռը։ Ահա...
Վերջապես մենք գտնվում ենք կիմածվի՝ Պահեատարիալի զլսավոր
կլոր զահլիճում։ Վոչ միտեղ լուսամուտներ չկան։ Դահլիճում մութ է։
Մի ինչ վոր տեղից, վերից թե ներքեց, չես կարողանում
վորոշել, ոլուրալի խորհրդավոր լուր ե սփռվում։ Ծառ բարձրում,
մեր զլուխների վերև, կամար ե կապել փայտուն առաստաղ կափա-
ռիչը։


Դահլիճի պատը թանձր սև է։

Վոչ մի տեղից վոչ մի հատիկ ճառագալթ ներս չի թափանցում։
Այդ կլոր սև պատը գոտու նման պատում ե դահլիճը։ Պատի
վերևում, այսաեղ, վորտեղից սկսվում ե սպիտակ առաստաղը, ձըգ-
վում ե սև խաղալիք՝ քաղաքը, փոքրիկ Մոսկվան։

Տներ, աշտարակներ, արձաններ, ծխնելուցներ։




Ահա ձեզ փոքրիկ Կրեմլը, բոլորովին նման ե խսկանին։
Ցեթե կանգնում ես դահլիճի մեջ տեղում, թվում ե, թե բար-
ձըր տանից տեսնում ես ամբողջ Մոսկվան։
Պետք ե վոր դրանց մեջ լինի նաև այն տան տանիքը, վոր-
տեղ մենք ենք ապրում։ Բայց փնտռելու ժամանակ չկա...»



Դահլիճի մեջ տեղում,
ցանցավոր վոտքերը լուն
դրած կանգնած ե մի
դարձանալի մեքենա:
Ծալված վոտքերի վրա
դրված ե նրա մեծ,
թեքված մարմինը:


Ինչքան պտուտակ-
ներ, փորվածքներ և
ցցվածքներ ունի նա...
Մետաղյա հարմի լերկու
ծալրից հաղցրած են լեր-
կու մեծ սև դնդեր:



Քնդերը չոել են իրենց տպակե աչքերը, Նրանք նման են
լերկու հսկայական ջրասուլզների, վորոնց մարմիններն իրար են
կպել, իսկ գլուխները ջոկ են և փայտի վրա մարմամարզություն
են կտտարում:

Ջրասուլզների մեջ պահված ե աշխարհիս մեխանիզմը, խաղալիք
լերկնքի մեքենալական բաժանմունքը: Այս գործիքը կոչվում ե պլա-
նետարիա:

Այդ ջրասուլզներին պետք եր կոչեց լերկնասուլզներ: Ջրասուլզ-
ներն իջնում են ծովի հատակը և մեզ պատմում են ստորջրլա լերկը
կազմության մասին: Իսկ Պլանետարիալի լերկնասուլզները մեզ
ոլժմ ցուց կտան լերկնալին խորությունները:




դուրս եւ գալիս տպրողը, իսկ տատեղ վոր սեղմում ես, դուրս եւ գալիս լուսինը:

Յերբ հաստըտկությունը նստում եւ, դուրս եւ գալիս «Երկնքի կտուարիչը» պրոֆեսոր աստղագետը:

Լույսը հանդչում եւ:

Դահլիճում բոլորովին մութ եւ կարծես բոլորն ել կուրացան, վոչ մի տեղ մի հատիկ լույսի ճառագալթ չկա: Խավար եւ Յեզ լուռ... սըսնս...



Հաստիտլության նստելու տեղի կողքից, պատված եւ մի փոքրիկ գողտրիկ տեղ:

Այստեղ տեղավորված եւ յերկնքի և աստղերի գլխավոր վարչությունը:


Մի փոքրիկ, հասարակությունից ծածկված լամպոչկա լուսավորում եւ տախտակը, վորի վրա շարված են կոճակներ, կոճակների մոտ կտիսված են պղնձե փոքրիկ տախտակներ, վորոնց վրա մակագրված եւ լուսին՝ տրեւ:

Այդ աստղերի բնակարանների մուտքի դուռն եւ նա նման եւ մարդկանց բնակարանի մուտքին. զմնդի կոճակ եւ, իսկ կողքին ել գրված են ապրուների ազգանունները՝ Հովհաննեսյան, Պետրոսյան, Անոնյան, Սահակյան... Մատով սեղմում ես կոճակը, իսկույն

Հանկարծ լսվում եւ պրոֆեսորի ձայնը: Պլանետարիալի տուսադաշնամուկները աշխատում եւ շնչառում են առաջին արձագանք են տալիս և գալիս են ամեն կողմից:

Յեկ գորոյնեաւ չորս կողմը բոլորովին խավար եւ, թվում եւ, թե խոսում եւ հենց ինքը խավարը:

— Ուշագրություն, — ասում եւ վերելից, ձախից և աջից պրոֆեսորը, յերկնքն եմ ցույց տալիս:



ՅԱ ալլ ակնտթարթին մեր զլխավերն վառվում են հազարավոր աստղեր։ Կարծես առաստաղը չքացավ, իսկ նրա տեղը լեռաց աստղալից լերկինքը...»

Ծանոթ աստղերը մեզ աչքով են անում։

Ահա յեծ արջի կաթան։ Ահա թափած գարմանից առաջացած հարթագողի ճանապարհը, Փալլում և բնեռալին աստղը։

Դուք հիշում եք հերիաթներ իշխանական գլուխների և պալատների մասին, վորտեղ, իբր թե, առաստաղով ասաղեր ելին զբունում...»

Դրանք հերիաթներ, ճնարած բաներ ելին, իսկ ալստեղ, զահլիճում մեր

զլխավերն վայլում ե աստղալից իրականությունը։

Բոլոր լերկնալին գտղոնիքները խորհրդային աստղալից պատմի - Պլանետարիալի - առաստաղի վրա իրենց բացատրությունն են ստանում։

Պրոֆեսորի ձեռքում լերեաց մի խողովակ։



Խողովակից ձգվում ե, ինչպես ջրհան մեքենալից, լույսի բարեկ ճառագայթ։ Կառավարիչը այդ ճառագայթը ման ե տծում լերկնքի վրայով։ Ճառագայթը դիպցնում ե մի աստղի, տալիս և նրա անունը, ասում ե քանի տարեկան ե, ինչ ծագում ունի, վորտեղ ե ապրում, ինչով երպարապումնա մինչև հեղափոխությունը...»

Հետո ճառագայթը դիպցնում ե հարեան աստղին և ծանոթանում ե մեզ նրա հետ։

— Ահա ձեզ զոդիտ — տրջ համաստեղությունը, — ասում ե լերկնքի կառավարիչը։ Ապա, ընկեր աստղեր, ցույց տվեք ձեր փառաթղթերը։

Աստղերի կողքին փայլում են նրանց անունները։


Իսկ չորս կողմը մեր վերևում խաղալիքալին Մոսկվայի գլխին, զահլիճում տիրում ե փալլուն աստղալից գիշեր։ Զի կարելի հավատալ, վոր մենք գտնվում ենք փակ շենքում, իսկ փողոցում այժմ ցերեկվա ժամի լերկուսն ե։



Պրոֆեսորը մեղմում և կոճակներից մեկը և միաձուլված ջրառույզների մետաղլա ընդհանուր փորն սկսում է հազիվ լսելի գլուխութիւն Զրասուլիդները կամնաց կամաց պտտում են, կարծես ողում լողալիս լինեն: Նույն բոպելին բոլոր աստղերը շարժվում են իրենց տեղերից: Յերկինքը կտառում է իր որական պտույտը: Արևելքում ծագում են նոր աստղեր: Մեզ բոլորիս թվում եր, վոր մենք զգում ենք, ինչպես պտտվում է յերկիրը: Ահա... ահա... թռչում ենք ինչ վոր մի տեղ: Խակալիքալին հրբիղոնի մի ծայրը սլանում են ներքեւ, մյուսը՝ վերև... Գալիլեյը ճիշտ եր ասում: Ոֆ, յերկիրը պտտվում ե: Ոֆ... կրկին անգամ: Նույնիսկ զլուխս մի փոքր պտը տվեց:


— Յերկու գիշեր անցավ, — ասում է պրոֆեսորը:

Մենք շատ վախեցանք: Ինչ շատ ենք նստեր:
Մեկն՝ ուշացել և ճաշից, մյուսը՝ դպրոցից, յերրորդը՝ ծառալությունից: Բայց փաստորեն անցել և ընդամենը մի քանի բոպեն Պլանետարիայում ամբողջ տիեզերքը չափազանց փոքրացրած եւ ժամանակն ել այստեղ կարճ եւ Յերկրագունդը պտտվում եր առանցքի շուրջը 24 ժամկա ընթացքում: Ալղակիսի մեծություն ունեն խակալան յերկրակին որ ու զիշերը, իսկ Պլանետարիայում որ ու զիշերն անց են կենում յերկու, յերեք բոպելում: Մենք դեռ ճաշի չենք ուշանաւ:




Առաղագեաները շատ վաղուց յերկինքը լավ դիտել են չափաղանց խոշորացնող խողովակների՝ հեռադիտակների միջոցով: Նրանք իմացել են, թե ինչպես եւ շինված աշխարհ՝ տիեզերքը: Նրանք ուսումնասիրել են յերկնքի՝ որենքները, վորոնք առանց վորե աստծու զեկավարում են աստղերը և ստիպում նրանց շարժվել: Վորպեսզի մարդկանց համար պարզեն ամբողջ յերկրակին կազմությունը և ցույց տան, վոր վոչ մի աստղած ել յերկնքում չկա, գիտնականները հնարել են «պլանետարիա» գործիքը, վորն իր առտաքինով նման է յերկիպուլակ՝ ջրամուլիների: «Պլանետարիա» գործիքի մեջ տեղավորված է հարյուր տասներկու պրոեկցիոն լամպեր: Այդ լամպաներներն ուրիշ անունով կոչվում են նաև մոգական բայց գիտնականները բոլորովին չեն սիրում այլ խոսքը:

— Վոչ մի մոգական բան չկա, — բարեացած ասում են նրանք, — միայն հեքիաթների մեջ եւ լինում մոգությունը... Իսկ սրանք ուղղակի պրոեկցիոն լամպերներնեւն: Վոչ ոփ ճմոգականն: Ահա թե ինչ



Լավ. հարյուր տասներկու վոչ մոգական լապտերները Պլանետարիայի առանձտաղի վրացուց են ատլիս հինգ հազար չորս հարյուր աստղեր և մոլորակներ Գործիքի բոլոր մասերն ել ճշտութիւնը լենթարկվում են աստղադիտութեանը, իսկ ալդ ամբողջ շարժումը դե-



կտվարում ե պրոֆեսորը, սեղմելով մեկ ալս, մեկ ան կոճակը: Պրոֆեսորը սեղմում ե կոճակը, — ծագում ե լուսինը:

Լուսինը վազում ե լերկնքով: Նա շտապում ե, վորպեսզի մենք չուշանանք ճաշից: Ահա նա նիհարեց ու դարձավ մանգաղի Հետնորից սկսեց թշերն ուղղնել... Պլանետարիայի դահլիճում մի աճրողջ ամիս անցավ, թեև մենք ալստեղ նստած ենք ընդամենը տասնհինգ ըոպեր:

Բայց այդ դեռ բոլորը չեւ Ծագում ե հսկայական լուսին: Ալդ ձևով կարող ենք նրան տեսնել հեռադիտութեան:

Ալժմ մենք տեսնում ենք նաև ուրիշ լերկնալին մարմիններ, վորոնց լերբեք չելինք կարող ալսպես դիտել հաստրակ աշքով:


Մեզ ցուց են ատլիս՝ Սատուրն մոլորակը, վոր շատ նման է մի հսկայական հոլիս:

Յերեսում ե աստղերի մշուշտապատ կծիկը:

Սարդերի խիտ շարան և սոսկալի շիկացած տոք գոլորշիներ...

Յերկնը վարիչը լերկնքով բաց ե թողնում մոլորակներ: Նրանք վաղում են տիտան, ինչպես կրկեսի սովորած ձիւերը, ինչ Մերկուրի մոլորակը քմահած ձիրու նման կանգ ե տաճում, լետ լետ ե գնում, տպա կրկին առաջ վազում լերկնքով...





Պրոֆեսորը հանկարծ
առում ե՝

— Մեկնեցեք Հյու-
սիսալին բեեաւ Աժխարհիս
գազաթը Տեսնենք, ան-
տեղ յերկինքն ինչպիսի
տեսք ունին

Յեվ ահա յերկինքը գնում ե մի կողմէ

Մենք ոլանում ենք ավելի արագ, քան ամենատարտղճնթաց
վաղքի տառոմորիլը Բեգեռալին աստղը կանդնում ե հենց ճիշտ
մեր գլխավերիլը

Մենք արդեն բեեռումն ենք:

Մենք հենց արդպես ել կաեսնելինք յերկինքը, յեթե տպրե-
մու լինելինք բնեռումն

* Վորպեսդի տեսնենք այդ յերկինքը, մարդիկ ամիսներով վոտ-
քով ճանապարհ ելին գնում սասցե անապատներով։ Մարդիկ
գնում ելին շներով, նավերով և գահակներով (լիժաներ)։

Նրանք սասցե լեռների վրարավ թռչում ելին ողապարիկներով,
սավառնակներով և դիրիժարիներով։

Իսկ Պլանետարիան մի քանի ըստելում մեզ հասցըց տրտեղ։


Այս թե ուր կարելի

մե գնուլ Պանետարիայի
տոմսակներով։



— Ահա ինչու այսպես ցրտեց։ Սառը քամին փշեց։ Միթե
մենք խկազես գանգում ենք բեեռում։

— Վոչ։ Այդ նրանից ե, զոր նեկն անդգուշությունը բացեց
դահլիճի դուռը և միշանցիկ քամին փշեց։ Յեւ յեթե դուք մըսեք և
հարբուխ ստանաք, կարող եք տաել, զոր հարբուխը ստացել եք
Հյուսիսալին բեեախ յերկինքի տակ։




Անտղմուկ վազքը վերջացավ:

Մենք գտնվում ենք լերկապնդի. մյուս մտածի վրա:

Մեր վերկում արդեն փայլում ե հարավային կիսագնդի չտեսնված խիտ աստղալից լերկինքը: Փալլիլում են մեզ անձանոթ արեգադարձի աստղերը:

Այդ աստղերի տակ բուսնում են տրմավենիներ, ապրում են վարդենիներ, փղեր, ծամածռություններ են անում գորիլլաները:

Լավ ե, զոր մենք վերաբերուներս թողինք կախարանում, թե չե արևադարձային լերկում թերես շոգ կլիներ, կը բանելինք...



Մենք արդեն նորից ենք պահում. Պահանետարին մեզ թըսցնում ե գեղի հարավ: Մենք ավելի արագ ենք թռչում, քան մենահամարձակ ողաչուն:

Մանոթ սարդերը չքանում են:

Ու, ու, ու, բռնեցեք, բռնեցեք... Յերկու Արջերը, և Փոքրը
և Մեծը՝ վախչում են:

Պլանետարիան ամենամըրտգընթաց մեքենան եւ տշխարհում։ Վոչ
մի ստվառնակ, նույնիսկ հրթիռ, չեր կարող լերբեք լերեք ըռպե-
լում բենոից մեզ հասցնել արևադարձալին լերկիր։ Բայց... Թուզ
տվեք։ Թուզ տվեք, ընկեր լերկնքի կառավարիչ, ալս ի՞նչ եւ։

Մի կողմից մենք տեսնում ենք տարորինակ սկ, լերբեք չտես-
նված լերկինք... Հսկալական, հինգ—տասն անգամ սովորական լուս-
նից մեծ լուսին, վոր լողում եւ սրտծալը սարերի վրայով։

— Ահա մենք գտնվում ենք լուսնի վրա, հանգիստ տառամ եւ
պրոֆեսորը։




— Լուսնի վրա... Ահա՞մենինչ։ Բարի դալուստ՝ իսկը վնը տեղ
եւ մեր լերկրագունդը։



— ՅԵՐԿՐԱ՞ԳՈՒՆԴը... Ահա նա, մի հսկալական լուսնի նման,
լողում եւ մեր վերեսում։ Տես, լերեւմ են Աֆրիկան, Ասիան և ՅԵՐ-
ՔՐՈՎան։ Այս այնտեղ Մոսկվան եւ... Մեզ ճաշի լեն սպա-
սաւմ։

Պրոֆեսորը խոստանում եւ, վոր տպուրը՝ դեռ չստուծ, մենք
արդեն տանը կինւնք։ (Սրտ շատ լավ եւ, թե չե զբոսնելով լերկն-
քում, մենք բավական սովել ենք)։

Պլանետարիան մեզ վերադարձնում եւ լերկրագնդի վրա, իսկ
պրոֆեսորը նոր՝ նոր անակընկալ բաներ եւ պատրաստում մեզ հա-
մար։ Նա որը հետ եւ շրջում։ Ժամանակը լետ եւ դառնում։ (Ժամա-
ցուցի սլաքները շարժվում են տղից դեպի ձախ 12, 11, 10... 9 1/2,
9... շաբաթ, ուրբաթ, հինգշաբթի, չորեքշաբթի... հունիս, մա-
յիս, տպիլ, մարտ... 1930, 1929, 1928, 1927, թիվ.. Միլոնավոք
տարիներ լետ լինք վազում։








Այս յերկինքը վոչ մի մարդ չի տեսել, վորովհետև այն ժամանակ մարդիկ գոյություն չեն ունեցել: Ահաելի, սարսափելի և հըսկաւական հըեշներ եյին ապրում այդ ժամանակ յերկրագնդի վրա: Հասակով նրանք ութ հարկանի տանից ել բարձր ելին: Մեզ ցույց են տալիս բրոնտողավրներ և ցերատողավր:


Յերկինքը նորից պտավում ե, բայց այժմ ժամացույցը շիտակ և աշխատում: Որերը, շաբաթները և ամիսներն արդեն գնում են ոնպես: ինչպես հարձին եր:

Չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ... մարտ, ապրիլ, մայիս, հունիս, 1927 թ. 1928, 1929 թվի...




— Ապա, վեր թվականն ե այժմ,—հարցնում ե պըռփեսորը:
— 1930,—պատասխանում ենք մենք:
— Վոչ, ոխալվեցիք,—հայտացնում ե պըռփեսորը:
— Մեր դահլիճում այժմ 1933 թիվն եւ Սհա ձեզ 1933 թվականի յերկինքը:

1933 թիվը հնդամյակի վերջին տարին եւ Այդ յերկինքը պետք ե իրար միացնի նոր հսկայական շենքերի տաճնիքներ:



որ, — առում ե պըո-
ֆեսորը, — հարդագողի
ճանապարհից մնաց
նշմարելի, գունտ
փրփուր: Աշխարհից
մթությունը չքացավ:
Համաստեղություն-
ների հետրեկիը դառ-
նում են աննկատելի:

Կամաց կամաց լու-
սանում ե լեռկինքը,
կապույտ գույն ե ստա-
նում: Մեկը մյուսի լե-
տեկից անհետանում են



Այդ աներն առաջմաս միան ցուց են տրված հնդամյակի գծաղրերում: 1933 թվին նրանք արագ պետք ե կառուցված լինեն այն լեռնքի տակ, վոր ցուց ե տալիս պրոֆեսորը:


Մեր առաջ նստած ե մի հոկտեմբերկ, վորն այն ժամանակ պետք ե դառնու պիսներ: Մեզմանից ձախ նստած ե մի պիսներ, վորը 1933 թվականին արգեն պետք ե լինի կոմիերիտական:

Մեր լետեսում նստած ե մի ծեր մարդ:

— Յեթե ապրեմ մինչև հնդամյակի վերջը, — հառաչում ե նա,
— կտեսնեմ այդ լերկինքը...

Անպարման կապրեք, քաղաքացի: Չե վոր մեր հնդամյակը պետք ե կատարվի 4 տարում: Նա վերջանալու լե 1932 թվին:

աստղերը: Հորիզոնի
վրա ավելի ու ավելի
նշմարելի է դառնում
կրեմլը: Արագ լու-
սանում են կարդագույն
արշալույսը՝ ջերմա-
ցնում ե արևելքը: Դահ-
իճում ծագում ե արև..
Այդ իսկ ըոպելին լեռ-
կինքը հքանում ե մեր
գլխավերեսում: Մենք
նորից տեսնում ենք
առաստաղը — կափա-
սիւմ:




Պրոֆեսորը վերջացնում է դասախոսությունը: Յերկվորյակ—
ջրասուլզները գաղաք են առնում, վորոնք քիչ տուած շուռ ու մուռ
ելին տալիս յերկինքը: Ժամի չորսն եւ: Յերկու ժամվա ընթացքում
մենք կարողացանք դիտել տմբողջ յերկինքը, աստղերը, և մոլորակ-
ները, բարձրացանք լուսնի վրա, տեսանք բրոնտողվավճներ և հնգա-
մյակի վերջին տարին:

Դուրս ենք գտլիս փողոց:

Պարզ տրե ոք եւ կենդանաբանական այլում մոնջում եւ տո-
լուծը: Կարծես թե անտեղ կենդանացել եւ Արջ... համաստեղու-
թլունը: Իսկ բրոնտողմավրերը շատ վաղուց վոչնչացել են Կուղրին-
սկու հրապարակում, նրանցից մի հատ ել չկա:

Բանվորները կառուցում են մի բարձր տուն, վոր 1933 թվին
հասնելու լե յերկինք: Փոքրիկ, անուշ, գունատ լուսինը վաղեմի
ծանօթի նման ժպտռում եւ հեռվից: Տրամվայները մոլորակների նման
շտրժվում են այս ու այն կողմը: Միւյցիները դեկտվարում եւ փո-
ղոցի շարժումը:

Մենք ճաշին հաստնք ճիշտ ժամանակին: Լույ եւ տալրել մեր
մոլորակի վրա: Հատկապես, յեղկրադնդի այն մեկ վեցերրորդի
վրա, ուր մարդիկ դեպի յերկինք են դառնում վոչ թե տան անկրուն-
ներում, այլ Պլանետարիայում:



3595

9 кмс 60 члт.

КАСИЛЬ-ПЛАНЕТАРИЙ ГИЗ ССРА ЭРИВАНЬ
1932